86. ՔԱՌԵՐԵՆ ԲԱԽՏԸ

Իլալ ա, չիլալ մին քառ մարթ։ Էտ մարթը ուրանց շենին էծ պահող չոբանն ա իլալ։ Մեհեստ էծերը տընես ա ընես մին լենշոտ տեղ, ինքյը կյաս, թա մին խըրեգյ հաց օտե։ Կյաս ա հաց ուտես, քյիս, տըսնաս էծերը կորալ ըն։ Քյիս ա, թա շոռ կյա։

Շատ ա շոռ կյաս, խըրեգյ ա շոռ կյաս, քըթընաս չի։ Քյիս ա տըսնաս մին մարթ վար ա ընես։

Իծարածը հըրցընես ա էտ վար ընողան, թա. — Մեր էծերը տըեսալ չը՞ս։

Վար անողը թա. — Ըսօրե ըստըղան տենը, էնքան տեղը վարալ ըմ։

Ըսես ա, ծեռքն էլ մկընես, նըշանց տաս։ Տու մեր ասել, էտ մարթն էլ ա քառ ընիս, վեր իծարածը հըրցնես ա ըծերեն տեղը, ինքյը գյիդաս ա, թա հըրցընես ա, թա ինքյը հինչքա՞ն ա վար ըրալ։ Վեր վար անողը նըշանց ա տաս ծեռքավը, թա հինչքան ա վարալ, իծատարը գյիդաս ա, թա ուրան ըծերեն տեղրն ա նշանց տաս։ Ծեռքը մեկնած թուշավը քյիս ա, էծերը քըթընաս։ Պիրիս ա, թա մին էծ տա վար ընողեն, վեր իծերեն տեղը ասալ ա՞։

Թարսու նման էտ էծը, վեր պտի տա վար ընողեն, պոզը կոտրած ա ինիս։

Վար անողը գյիդաս ա, թա չոբանն ըսես ա թա. «Էս էծեն պոզը խե՞ կոտրալ ըս»։ Բաղասխանը տաս ա, վեր ինքյը չի կոտրալ։

Վերչը կըռըեվ ա տըռնաս։ Վեր կըռըեվը թունդիս ա, քյիս ըն,

թա՛ մին մարթու կյենգյատ անին։ Հըղրեցը մին հարթն ա շրհիս, խուրջինը օսավը քրցած քյինիս։ Իծա՛տարը, մըն էլ վար անողը էտ հարթնեն ամեգյը ուրանցըն ըն ըսես։ Բախտը կրտըրված, էտ հարթըն էլ ա ինիս քառ, ինքյն էլ մարթան տուս եկած, քյիս ա ինիս ուրան հարանց տոն։

Ինա էլ գյիդաս ա, թա՛ էտ մարթիքյը ըսես ըն, թա՛. «Եթ տրեռ, քյինի քու պրտրունանց տոնը»։

Տա էլ ըտրանց կյընգյատեն պրդրսխընես ա, թա՛.— Ծեր հի՞նչ կործըն ա, թա յրես մարթիս նրհետ ըպրես ըմ, թա չէ, ընդրանք փիս ըն, յրես վեր մրեռնիմ, քյնիլ չըմ ընդահանց կոշտը՞։

Էտ իրեք հուքյին քյիս ըն, թա՛ մին օրիշ մարթու քրշտե նաղլ անին։ Շատ ըն քյիս, խրեգյ ըն քյիս, ըտէլ աստուծ ա գյիդաս, մրթնես ա։ Տահանք ընգես ըն մին մրթեն ծոր։ Քյիս ըն նի մրննես մին օրանալիգյ ճեղաց։ Էն էրկու մարթը նի յրն մննես ճրղացեն նավը, հարթնըն էլ նի յա մննես տողը։ Քշերվա մին վախտ տրսնաս ըն կյողերը մին խիլլա տավար ըն պիրիս, նի ընես էտ ճեղացը, ուրանք էլ տրռանը նստուտես, վեր կես անին։ Տավարը պիժնես ըն, թա քյինին։ Էտ իրեք հոքյին վրխելնան նհետ վեր տուս ըն տրռնաս, կյողերը գյիդաս ըն, թա՛ ըտրանք քաշկեր ըն, վրխելնան նրհետ թուղես ըն լրղաճաք փրխճիս, էն քրշերվան կեսեն, էն քրրերեն մաչավը, վրննրծեռք ըրած, կրլխրնեն ճուրղուտելավ, վրննրրնեն ցաքյը ծրկուտելավ, մին բա՞շ։

Էտ կյուղացած տավարրն էլ մնաս ա էտ քառ շրվրրներեն։ Ըտրանք ուրանց մաչին պրժրնես ըն, ամեգյը ուրանց պաժինը յեր կալած, քյիս ըն ուրանց տոն։ Էտ հարթնըն էլ ետ ա տրռնաս ուրան պրտրունանց տոն։

Մարթը վեր տրսնաս ա կրնեգյը էտքան տավար ա պերալ, ըսես ա. — Ա՛ կրնեգյ, ջանետ մատտաղ է՞, քյրեզ տուս ընողին քյալլան... մրհենգյանց տենը քյրեզ տուս չըմ քրցլական, մրհենգյանց տենը քյրեզ շատ ըմ սիրլական, հինչ ասիս ընական ը՞մ...